- 2) Масловский Е.В. Мировая война на Кавказском фронте 1914-1917 гг. Париж, 1933; Корсун Н. Г. Сарыкамьшская операция на кавказском фронте мировой войны в 1914-1915 году. М., 1937; Его же. Первая мировая война на Кавказском фронте. Оперативно-стратегический очерк. М., 1946.
- 3) См.: Корсун Н. Г. Сарыкамьшская операция... С. 16.
- 4) Новый энциклопедический словарь Ф.А. Брокгауза и И.А. Ефрона. Т.1.Спб.-Пг., 1911-1916. С. 467.
- 5) Энциклопедический словарь Русского географического института Гранат. Изд. 7-е. Т.1. С. 426. В этом случае качество пояснения оставляет желать лучшего, хотя бы на основе того, что составители по какой-то причине разделили понятия Батумская область и Арвинский округ. Чтобы понять всю абсурдность этого разделения, достаточно взглянуть на карту Российской империи начала XX века, где чётко отмечено, что Батумская область состояла из Арвинского и Батумского округов.
- 6) См.: Сборник договоров России с другими государствами, 1856-1917. М., 1952. С. 204.
- 7) См.: Веру И.А. Батум и его окрестности. Путеводитель по Батуму. Справочный отдел. Адреса и объявления. Батум., 1910. С. 23.
- 8) Там же. С. 21.
- 9) См.: Лисовский В.Я. Чорохский край (военно-статистический очерк). Вып.1. Тифлис, 1887. С. 38-39. Около 4 тыс. переселенцев (махаджиров) впоследствии вернулись обратно.

Живущий в Ардине, 72-летний собиратель устного народного творчества Незахат Сезгин заявил, что танец "Ата", прославивший Ардин на всю Турцию, на самом деле - армянский танец.

Как сообщает Информационный портал "Ардин и ардинцы", Незахат Сезгин, отметил, что каждый пожилой человек, живущий в Ардине, знает о том, что "Ата" - армянский танец, и что известны даже музыка и слова этого танца. Он также сообщил, что, хотя ноты и движения представляемого сегодня танца "Ата" претерпели некоторые изменения, в некоторых селах пожилые люди продолжают танцевать настоящий танец "Ата".

Незахат Сезгин рассказал следующее: "7 марта 1936 года, в "день освобождения" Арвина, в анкарском ресторане "Карпич" выступала этнографическая танцевальная группа из Арвина в составе Хюсейна Танто (руководитель группы), Ахмеда Чевика, Исмаила Чевика, играющего на волынке Хасана Озтюрка и моего отца, аккордеониста Мурада Чошкуну. Среди танцев, которые должна была представить ардинская группа, был назван "Армянский танец". Сидящий в

## Турецкий танец "Ата" - на самом деле танец армян Арвина



Ардин сегодня.  
Фото С. Варданяна

своей ложе Атаюрк, услышав это название, начинает беспокоиться. Он встает с места, идет в ложу, где находится танцевальная группа из Арвина, и говорит: "Мне очень нравится ваш танец. Я станцую его вместе с вами. Только название его мне не понравилось". После этого Хюсейн Танто отвечает: "Паша, с Вашего позволения мы назовем этот танец "Ата". Атаюрк не дает никакого ответа, ни положительного, ни отрицательного. Несмотря на свою обеспокоенность, он танцует вместе с группой танец "Ата", движения которого просты. На обратном пути из Анкары в Ардин группа останавливается в Трабзоне, откуда сообщает об этом случае в Ардин, в администрацию губернии. В администрации принимают решение, согласно которому название танца меняется, и он отныне будет называться танцем "Ата". Это не только мое предположение - спросите любого пожилого ардинца, и он скажет вам, что ему известно об этом".

Незахат Сезгин добавил также, что у него есть оригинальные ноты танца "Ата", музыка и движения которого со временем претерпели некоторые изменения, и что он подарит их музею, который собираются открыть в Ардине.

ՈՌԻԲԵՆ ՍԱՐԱԿՅԱՆ, պատմական գիտ. թեկնածու

ՏՐԱՊԻԶՈՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԵՆԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1916-17թթ.) (Փաստաթղթեր)

Սկիզբը՝ 2010թ. NN 5-6, 7-8, 9-10, 11-12-ում

N14

ՏՐԱՊԻԶՈՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՄԱՌՈՒՄԱՍՏԱՆՅԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՏՐԱՊԻԶՈՆԻ ԲԱԺԱՆՄՈՒԹԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՁՆԱԿՅԻՑ ԲԵՐՎԱԾ ՀԱՅ ՈՐԻԲԵՐԻ ՄԱՍԻՆ

1 ноября 1916 г. [г. Трапизон]

В Согор Городов

Сироты пибывшие из Ерзнка 31 октября 1916 г.

1. Лусик Нахапетян Торлакян 30 [13] л[ет] из Апиона  
 2. Ваган Ованесович Торлакян 13 л[ет] -,-  
 3. Манушак Нахапетовна Овакян 14 л[ет] -,-  
 4. Лусик Ервандовна Торосян 14 л[ет] из Самера  
 5. Вагаршак Тиранович Косаян 14 л[ет] из Самарукса  
 6. Анушаван Карникович Быюкян 16 л[ет] из Шапин-Караисара

Прошу выдать им пособие, так как они ничего не имеют.

Уполномоченный Арш[ак] Аракелян [подпись]

Эти лица новоприбывшие и абсолютно лишены всего. Аршак Аракелян [подпись]

ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 7, ք. 15: Պատճեն: Չեռագիր:

N15

Հ. Ղ. ՓԱՆԱՆՃՅԱՆԻ ԽՆԴՐԱՆՔԸ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԵՂՐՈՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՃ ԵՂԱԾ ԱՊՐԱՆՔԸ ՊԱԳՊԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

19 դեկտեմբերի 1916թ. Երզնկա

Յարգելի Տիարք  
Տեղ[ալկան] Հայկական Զօմիթ

Տրապիզոն

Թերևս իմացած եք ողջ մնալու, շատուց կփափագի հոտ գալ մեր գործերու համար, սակայն ալ աւելի կարևոր գործերու պատճառաւ սպասեցի:

Ստացածս տեղեկութեամբ, եղբայրս պրն. Յակոբի գացան օսմ[անյան] կառավարութեան կնիքով կը մնայ կարգ մը ուրիշ բաներով կաթոլիկներու առաջնորդարանին մէջ, մօտ ատենէ ես ինքս հոտ գալու մտադիր լինելուս, կը խնդրեմ Ձեզմէ, որ նոյն հսկողութիւնը ընէք ապահով մնալու և չբացուելու համար մինչ իմ գալստի:

Յարգանքներ՝ Հովհ. Ղ. Փալանճեան [ստորագրութիւն]

Յ. Գ. Ներփակ մանակն իր հասցին հաճիք հասցնել:

ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 11, ք. 15: Բնագիր: Չեռագիր:

N16

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՏՐԱՊԻԶՈՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Մ. ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄԵԼՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ Լ. ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՈՒՂԱՐԿԵԼ ՓԱԽՏԱՎԱՆՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՄԱՍԻՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՀՈՒՆՎԱՐ  
ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ  
ՏՐԱՊԻԶՈՆԻ  
N 39

12 հունվարի 1917թ. Տրապիզոն

Տրապիզոնի Հայկական Կոմիտէի Նախագահ Մեծ[արգո] Նախագահ պ. Արշակ Առաքելեանին

Տեղույս Յունաց Միտրոպոլիտի Նախագահութեամբ, ինչպէս հաղորդեց ինքը, կազմուած է յատուկ խորհրդակցութիւն փախտականների ու պատերազմից վնասուածների վիճակը բարվոքելու նպատակով: Այդ խորհրդակցութիւնը մեր կողմից մասնակցելու ու մեր փախտականների մասին պարտ ու պատշաճը հոգալու համար առաջարկուած են Ձեզ լինել այնտեղ մերկայացուցիչ, իսկ եթէ ունէ պատճառով չէք կարող, հաճեցէք յամենել այդ պաշտօնը կոմիտէի փոխ-նախագահ պ. Միհրդատ Էմերեյեանին:

Ներկայացուցիչ Մ[ետրոպ] ա[վագ] ք[ահանա] Մե[լեան] [ստորագրութիւն]

ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 30, ք. 74: Բնագիր: Չեռագիր: (Շարունակելի)

Սկիզբը՝ 1-ին էջում:

- Իսկ Հայաստանից հայերեն թերթը հասնում են:
- Ոչ, բայց ստանում ենք Կրասնոդարում հրատարակվող «Երկրամաս», «ՍԱՌ», «Մաշտոց» թերթերը, «Խաչքար» ամսագիրը, որոնք բոլորը ռուսերեն են:
- Իսկ հայկական հեռուստաալիքներ դիտում եք, Արմավիրի հայերն այդ նպատակով ալեհավաքներ տեղադրում են:
- Այո, հայկական հեռուստաալիքներ դիտում ենք՝ «Հ1»-ը, «Շանթ»-ը, մյուսները, դրանք օգնում են, որ մեր հայրենակիցների շրջանում պահպանվի խոսակցական հայերենը: Ամենակարևորը, որ յուրաքանչյուր հայ գիտակցի հայոց լեզվի իմացության անհրաժեշտությունը և կարողանա գերծ մնալ օտարներից ծուլվելու վտանգից:
- Իսկ Արմավիրի մյուս ռուսական դպրոցներում կա՞ն հայերենի ֆակուլտատիվ խմբեր:
- Այո, թիվ 6-րդ, 9-րդ և 20-րդ դպրոցներում, բայց ոչ միշտ: Արմավիրի հայկական եկեղեցուն կից տասը տարուց ավելի է գործում է կիրակնօրյա դպրոց, այդ մասին ավելի լավ է խոսի ուսուցչուհին՝ Հովհաննիս Դարբինյան-Քոչարյանը, որը նույնպես ծաղկածորում է:
- Տիկին Վալենտինան ծանո-

Ուժացման ճանապարհին

բացնում է տիկին Հովհաննիս Դարբինյան-Քոչարյանի հետ: Նրան խնդրում են պատմել իր մասին:

- Ծնունդով Ջավախքից եմ, 1987թ. ավարտել եմ Երևանի Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական ինստիտուտը: Ուսումնառության տարիներին գուգահեռաբար ստացել եմ նաև լրագրողի մասնագիտություն, ուստի, ավարտելուց հետո շուրջ 10 տարի աշխատել եմ Ջավախքում՝ Բոգդանովկայի (Նիոնոմիդոս) շրջանային «Արշալույս» թերթի խմբագրությունում: 1990-ական թթ. սկզբին, երբ Կրասնոստավսկոյում սրվեց, էլեկտրականություն չկար, թերթը փակվեց և 1993թ. մենք տեղափոխվեցինք Արմավիր: Այստեղի համայնքը հրատարակում էր «Կռունկ» ռուսերեն թերթը, որը տպագրում էր հայկական թեմաներով նյութեր, բայց հայերեն էջ չուներ: Ես բացեցի հայերեն էջ, համակարգչի համար Հայաստանից ստացա հայերեն տառատեսակներ և մինչև թերթի փակվելը՝ 2002թ., շուրջ 9 տարի թերթն ուներ մեկ հայերեն բաժին, որում հիմնականում անդրադառնում էի Արմավիրի անցուղաբաժնի: Այդ էջում վարում էի

նաև հայերենի ուսուցման դասընթաց: 1999թ. աշխատանքի անցա Արմավիրի հայկական Ս. Աստվածածին (Վերափոխումն Սուրբ Աստվածածին) եկեղեցուն կից բացված հայկական կիրակնօրյա դպրոցում:

- Որքա՞ն աշակերտ ունեք:

- Ուսումնական տարվա սկզբին՝ սեպտեմբերին, գրվում են շուրջ 100 հոգի, բայց մինչև ուսումնական տարվա վերջը այդ թիվը չի պահպանվում, տարբեր պատճառներով մնում է 40-50 աշակերտ:

- Ովքե՞ր են գալիս հայերեն սովորելու:

- Հիմնականում Հայաստանից, Կրասնոստավսկոյից և Ադրբեյջանից արտագաղթածների, կամ խառն ընտանիքների երեխաներ, երբ ծնողներից մեկը հայ է, մյուսը՝ ռուս: Մենք ուսուցանում ենք հայոց լեզու, հայ գրականություն, հայ ժողովրդի պատմություն և Հայ Առաքելական եկեղեցու պատմություն:

- Քանի՞ ժամ եք դասավանդում:

- Դասերն ընթանում են շաբաթ և կիրակի օրերին, 3-ական ժամ: Դիմողներ շատ կան, բայց քանի որ տեղներս լայն չէ, չենք կարողանում ընդունել: Ունենք 2 խումբ,

նույն խմբում ուսանում են 10 տարեկան երեխաներ և 40-50 տարեկան հասուն մարդիկ... Ունեն նույնիսկ մի ռուս աղջիկ՝ Սվետան, որն ավարտել է օտար լեզուների բուհ, բայց մեծ ջանասիրությամբ է ուսանում հայերեն, և հայ աշակերտները, երբ թարգմանություն անելիս դժվարանում են՝ դիմում են Սվետային: Նա մեծ սիրով է հայերեն սովորում, ասում է, որ ցանկանում է մի հայ երիտասարդի հետ ընտանիք կազմել:

- Իսկ ի՞նչ միջոցառումներ եք անում:

- Մենք ձգտում ենք, որ մեր դասերը հետաքրքիր անցնեն, կազմակերպում ենք բազմազան միջոցառումներ, ամեն տարի պարտադիր նշում ենք Մեծ Եղեռնի, Սպիտակի երկրաշարժի տարելիցները, մեկ եկեղեցական տոները:

- Իսկ ժողովուրդը եկեղեցի հաճախում է: Հատ գաղթօջախներում հսկայական միջոցներ են ծախսում, եկեղեցի են կառուցում, բայց չեն այցելում:

- Այո, գալիս են, հիմնականում տոների ժամանակ:

- Են ծնորհակալություն են հայտնում իմ գրուցակիցներին, և մտա-

հոգ բաժանվում: Փաստորեն, վերջին հարյուրամյակում Արմավիրում հայերի թիվը թեև եռապատկվել է, բայց չկան ոչ հայերեն թերթեր, ոչ հայկական դպրոցներ: 2002թ. մարդահամարի տվյալներով Կրասնոդարի երկրամասում բնակվում է 274.566 հայ, որից, իմ հաշվումներով, 56.045-ը 5-17 տարեկան են (20,4 տոկոս), թեև դպրոց սկսում են հաճախել 6 տարեկանից, բայց մարդահամարի աղյուսակներն այնպես են կազմված, որ հնարավոր չէ այդ տարիքից հաշվարկել: Ինչևէ, այդքան դպրոցական տարիքի հայ բնակչություն ունեցող երկրամասում կա ընդամենը մեկ հայկական դպրոց Ադլերում, այն դեպքում, երբ նույնիսկ տպատերազմյան դժվարին տարիներին՝ 1951թ., երբ շատ ուսուցիչներ գոհվել էին և բազմաթիվ դպրոցներ ավերվել էին, Կրասնոդարի երկրամասում կար 140 հայկական դպրոց, որից 13-ը՝ միջնակարգ և 40-ը՝ ութամյա: Եթե հաշվարկենք նույն համամասնությամբ (20 տոկոս), ապա Արմավիրի 15,116 հայերից 3083 հոգին 5-17 տարեկան է, բայց հայերեն են ցանկանում սովորել, բոլոր դպրոցները միասին հաշված, մոտավորապես 150-200 աշակերտ: Սարսափելի թվաբանություն է, ինչը վկայում է Արմավիրի հայության արագ ուժացման մասին:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Մեծարգո պրն Ս. Վարդանյան, մեծ հետաքրքրությամբ եմ ընթերցում թերթի 2010թ. N5-6-ից հաջորդաբար տպագրվող պատմական գիտությունների թեկնածու Ռուբեն Սահակյանի «Տրապիզոնի հայության փրկության կազմակերպումը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1916-1917թթ.)» հոդվածը: Հարգարժան հեղինակը արխիվային փաստաթղթերը ներկայացնելով ցույց է տալիս, թե ինչպես է կազմակերպվել այդ դժոխքից մազապուրծ մանուկներին օժանդակելու գործը: Ներկայացված փաստաթղթերում (1-13) պատմվում է ապաստաններ, որբանոցներ հիմնելու և երեխաներին համապատասխան օգնություն ցույց տալու, այլ քաղաքներ տեղափոխելու մասին: Այդ գործում հիշատակվում են Բաթումի Ամենափրկիչ եկեղեցու ավագ քահանա Մետրոպ Մելյանցի անունը և նրա ակտիվ գործողությունները տուժած մանուկներին օգնություն կազմակերպելու հարցերում: Հոդվածի հարգարժան հեղինակը հենց N5-6-ում նշում է, որ. «Մետրոպ ավագ քահանա Մելյանցի կենսագրության մասին ունեցած տեղեկությունները խիստ աղբատիկ են: ՀԱԱ-ում մեր պրպտումների ընթացքում հաջողվել է հայթայթել հետևյալը: Նա 1913-1914 ուսումնական տարիներին եղել է Տրապիզոնի երկսեռ վարժարանների տեսուչ: Տես ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 14, ք. 14»: Ես՝ օգտվելով առիթից, ցանկանում եմ որոշ հավելումներ անել Մետրոպ Մելյանցի կենսագրական բացը լրացնելու նպատակով՝ ո՞վ էր նա, ի՞նչ էր Մելյանցի ավագանի անունը, ու՞մ որդին էր և այլն: Այդպես, ավագ քահանա Մելյանցի ավագանի անունն էր Արամ, նրա հայրը եղել է Երևանի Գայանյան օրիորդական դպրոցի և Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու ավագ քահանա դիլիջանցի Հովսեփ Մելյանցը, որի հայրը՝ Հարությունը, նույնպես եղել է քահանա Դիլիջանի մոտ գտնվող Պողոսքիլիսա գյուղում: Դեռևս Հովսեփի փոքր հասակում մահանում է նրա հայրը: Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսես Ա Աշտարակեցին վերցնում է նրան որպես հոգեգալակ և ուղարկում Մայր Աթոռի ժառանգավոր դպրոց սովորելու: Դպրոցն ավարտելուց հետո 21-ամյա Հովսեփ Մելյանցը երևանի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցուն ձեռնադրվում է քահանա: Նրան

է հանձնարարվում երևանի Թեմական դպրոցի բացման և ուսման աշխատանքների կազմակերպման գործը (Հեմրիկ Խառատյան, «Հայրենի երկիր, հարազատ մարդիկ, հայրենանվեր գործեր», Եր., 2003, էջ 50-54, տե՛ս նաև «Նշանավոր դիլիջանցիներ, կենսագրական բառարան», Եր., 2008, էջ 81-83):

Մետրոպ (Արամ) Հովսեփի Մելյանը սովորել է նույն դպրոցում, որն ավարտելուց հետո աշխատել է նույն դպրոցում ուսուցիչ, դասավանդել է հայոց լեզու: Մետրոպ գրել է «Սուրբ Մետրոպ հայոց մեծ վարդապետ», «Քահանայական խնդրի շուրջը» գրքույկները, որոնցից մեկ օրինակ էլ նվիրել է հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանին, որն այդ առիթով Մետրոպ Մելյանին է հղել մի ընդարձակ նամակ:

Մետրոպ Մելյանը (այլ թղթերում երբեմն գրվում է Մելյանց) ամուսնացած էր, ուներ իրենց զավակ (2 աղջիկ և 3 տղա): Դուստրերից մեկը դառնում է դերասանուհի և բնակվում էր Գյումրիում: Խորհրդային կարգերի հաստատման տարիներին նոր իշխանությունների կողմից պայքար է կազմակերպվում հոգևորականության դեմ, ստեղծվում է «Ազատ եկեղեցի» կազմակերպությունը և Մելյանը ընդգրկվում է այդ կազմակերպության մեջ: Բաթումից նա տեղափոխվում է Երևան, որոշ ժամանակ աշխատում Հայաստանի Կենտրոնական արխիվում որպես արխիվարիոս, 1928թ. դեկտեմբերին հաստիքների կրճատման պատճառով ազատվում է աշխատանքից, լինում է ծանր հիվանդ և վախճանվում է Երևանում:

Ահա այսքանը:

**Հարգանքով՝ Հենրի Կ ԽԱՌԱՏՅԱՆ**

Խմբագրության կողմից: Հեմրիկ Խառատյանը ծնվել է 1926թ. Դիլիջանում, գինվորականի ընտանիքում: 1944թ. կամավոր մեկնել է բանակ: Ծառայել է մինչև 1950թ.: Վերադարձել է Հայաստան և երկար տարիներ աշխատել ներքին գործերի համակարգում, ստացել փոխգնդապետի կոչում: Կենսաքոչակի անցնելուց հետո աշխատել է մի շարք հիմնարկներում: 4 զբոյ հեղինակ է, որոնցից 2-ը հիշատակված են հոդվածում, մյուսներն են՝ «Հաղարծնի» (2002) և «Ժողովրդի հայրենօգուտ գործերը ոգևորիչ են» (2006):



Օսմանյան կայսրությունում բռնի իսլամացման ակիբը համաշխարհային մի խլայակ էլ դեռևս դարեր առաջ բերել է Տրապիզոնի Արաքլը՝ գավառի Քարադերեի շրջանի Քիզիրնոս գյուղ (նոր անունը՝ Քայաջըբ): Այն գտնվում է գավառի կենտրոնից 30-37 կմ, իսկ նահանգի կենտրոնից 60 կմ հեռավորության վրա: Քարադերե (Սև գետ) գավառից մոտ 30 կմ հեռավորությամբ Քիզիրնոսի կամուրջն է, որից մինչև գյուղի կենտրոն 7 կմ է: Այսօր գյուղն ունի 2.185 խառը բնակիչ<sup>2</sup>: Քիզիրնոսից դիմախայաց գտնվում են Ֆոշա, Այվեն և Ջիվնգավա գյուղերը, որոնց միջով հոսում է Դեյիրմենդերե գետը<sup>3</sup>: Այս գետի ջրերում ցեղասպանության տարիներին բազմաթիվ հայեր են խեղդվել: Ինչպես

է հունարեն իմացող իր համագյուղացի ընկերոջը և պարզել, որ դրանք ոչ թե հունարեն են, այլ հայերեն<sup>4</sup>:

Բերենք մի քանի օրինակ Գ. Աբուլի գրանցած բառացանկից՝ **աթոռ, ահրեթում (արի գոմ)** ոչխարներին գոմ կանչելու արտահայտություն, **բեռուք (պտուկ), գերոչ (կեռոց), գոփա (կոճակ), գունչ (գունձ), գայիդ (սարո), Էդիչ (եղինջ), խոզուք (մանուռ), քեռոչիկ (կայծոռիկ), քիլ (ծիլ), քեռնիկ (ճեռնիկ-ճոճանակ), հայսենքուր (հարսնաքուր), փուն (բուն), քոթի (կոթ)**<sup>5</sup> և այլն:

Բնակիչների պատմածի համաձայն նրանց նախնիները Քիզիրնոս են տեղափոխվել Չամլիհենձին (Ներքին Վիթ) գավառից: Թե երբ են Քիզիրնոսի համայնքի-

*խաչափիթ* (իմա՝ խաչափայտ, նոր անունը՝ Սուբաշը) գյուղի համայնքների բարբառային բառարանում ևս գրանցվել է «ազոս» բառը<sup>14</sup>: Հնձված խոսքերն էլ անվանվում են *ջոր*: Չորացած խոտը հավաքում, դիզում են: Այդ խոտի կույտերը կոչվում են *գունբուլ*<sup>15</sup>: Համայնքի բարբառում խոտի դեզին ասում են *գունգուլ*, այստեղից էլ՝ *գունգունել*-դիզել, կուտակել բայը<sup>16</sup>: Քիզիրնոսի խոսվածքում գունգունի բառամիջի -ն-ն հնչյունափոխվել է *մ-ի*: Ըստ Ի. Քարաջայի բառարանի՝ խաչափիթի համայնքների խոսակցական թուրքերենում ևս պահպանվել է գունգուլ բառը<sup>17</sup>: Համայնքի բարբառի հոսիայի խոսվածքում գործածական է *զոնգուլ էնուշ* ձևը, որ նշանակում է *կծիկ անել*<sup>18</sup>:

կազմվել է *գոմ+տեղ* բաղադրիչներից՝ **Գոմ-տեղ, Էդրուք-կազմվել է Էդի** կամ *եդի* (Համայնքի բարբառում ասում են դեռահաս կաթնահաս ցորենին)<sup>22</sup> +ուտ բաղադրիչներից, **Թեքուք (Tehkut)**-կազմվել է Թեդի+ուտ բաղադրիչներից՝ **Թեդուտ, Լենդերեվ (Lenderev)**-կազմվել է Լայն տերև բաղադրիչներից, **Սոնուք (Monut)**-կազմվել է մոնի (կաղնու տեսակ)+ուտ բաղադրիչներից, **Ղորղուտ**-կարծում ենք կորկոտ (ծավար) բառն է, հոսիայի համայնքների խոսվածքում գործածական է գորգոտ հնչարտասանական տարբերակը<sup>23</sup>, **Վեթոն (Vejon)**-կազմվել է *վիթ+ան* բաղադրիչներից՝ **ՎիթանՎեթոն, Վերիփոս (Veripos)**-կազմվել է *վերի+փոս* (հարթավայր) բառերից, **Հաջուլիթ (Hacovit)**-կազմվել է *խաչ+հովիտ* բառերից,

# ՔԻԶԻՐՆՈՍԻ ՀԱՄՇԵՆՑԻՆԵՐԸ

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀՎԱԿՅԱՆ, բանասիրական գիտ. թեկնածու

ինձ ասաց տրապիզոնցի ծանոթներիցս մեկը, դեռ այսօր էլ այդ մասին հիշում են տեղացիները: Գյուղի անվան հիմքում կարծում ենք, որ հայերեն *գզիր, գզիրոնց* բառի տեղական բարբառային դրսևորումն է: Համաձայն Գ. Աճառյանի՝ *գզիր* բառն ունի մի քանի իմաստ՝ 1. «կնիւն, կողով կամ խաիր հիւսելու սեզ», 2. *գզիր* «գիւղի տանուտրի երկրորդը», նաև նշանակում է «մուկնեղիկ, դեսպան, պատգամավոր», այս իմաստներով հայերենից փոխառել է վրացերենը<sup>4</sup>: Հավանաբար ենք կարծելու, որ տեղական հիմքում ընկած է բառի բացատրության առաջին իմաստը, հավանաբար գյուղը հայտնի է եղել խաիրագործությամբ, դա է հաստատում *—ան-ոց* վերջածանցը, որը մատնանշում է ինչ-որ մի բանի տեղ, Գ. Ջահուկյանի բնորոշմամբ՝ այն վաղնջահայկական տեղացույց ածանց է<sup>5</sup>:



ները մահմեդականացվել, առայժմ ստույգ տեղեկություններ չունենք, սակայն տեղացիների վկայությամբ, նրանք այնտեղ հաստատվել են 17-18-րդ դարերում: Աղբյուրներից հայտնի է, որ հենց այդ դարերում է Համայնքում իրագործվել զանգվածային բռնի մահմեդականացումը: Եվ այդ ժամանակ էլ բնակչության մի մասը ստիպված լքել է իր հայրենի բնօրրանն ու հաստատվել հարևան Քարադերե (Սև գետ) և Սուրմենե գավառներում: Սակայն հետագայում այդ գավառները ևս չեն խուսափել իսլամացման դաժան քաղաքականությունից<sup>6</sup>:

Չայնասկավառակի գրքույկում նկարագրելով Քիզիրնոսի գյուղական կյանքը՝ Մեսչիթ Չելիքթաշը գրում է, որ դեռևս 30 տարի առաջ Քիզիրնոսի ժողովուրդն իր պարուստը բացառապես ապահովում էր հողագործությամբ և անասնապահությամբ: Գյուղացիների մի մասը դիմում էր կարճաժամկետ արտագնա աշխատանքի, սակայն բոլորն էլ, ի վերջո, գյուղ էին վերադառնում: Գարնանը գյուղում սկսվում էր հողատարածքների մշակումը: Առաջին հերթին կանայք «*աիբունը*» (ախփուն) զանրյուղներով տանում էին իրենց դաշտերը, պարարտացնում հողը<sup>10</sup>:

Նշենք, որ Համայնքի բարբառի հոսիայի խոսվածքում *աղի* բառը նշանակում է բացառապես զոմաղբ, թրիք, իսկ կենցաղային *աղբին* ասում են ավելուք<sup>11</sup>: Թուրքերենը ևս հայերենից փոխառել է *աղբ* բառը, և թուրքական բարբառներում հանդիպում են՝ *աղփուն, աղբուն, աիբուն, աիբը, աբբուն* տարբերակները: Անգամ *աղբ* բառից կազմվել են բայաձևեր՝ *ahbunlamak-հողը պարարտացնել, ahbunluk/ahpunluk-պարարտացում, ahbin tarla-պարարտացված դաշտ*: Տրապիզոնի Քիզիրնոս գյուղի համայնքից հեռավոր գյուղերում թուրքերենում պահպանվել է *աիբուն*<sup>12</sup> ձևը, իսկ նույն նահանգի Վաքֆըբերի գավառի թուրքերեն խոսվածքում գործածական է *աղբ* տարբերակը<sup>13</sup>:

Գարնանը գյուղացիները երկաթե փոցխով քարերը մի կողմ են քաշում, հետո էլ հողը *աղբունով* պարարտացնում: Մայիսի կեսերին *քերենդիլով* (գերանդի) սկսվում է մարգագետինների հունձը, որը բավական ծանր աշխատանք է: Մարգագետինը հնձվում է շարքերով, որոնց գյուղացիներն անվանում են *արոսկալ*, ըստ երևույթին, բառը կազմվել է *արոս+կալ* բաղադրիչներից: Նշենք, որ համայնքի հեղինակ Ի. Քարաջայի՝ Ռիզեի նահանգի Փազար գավառի

Գյուղացիները, գարնանը դաշտերում աշխատանքը վերջացնելով, ամռան ամիսներին խմբերով, տոնական տրամադրությամբ բարձրանում են Լեռնային արոտավայրեր: Այնտեղ օգոստոսին հնձվում էին մարգագետինները: Այս աշխատանքներն իրականացվում էին համատեղ օգնությամբ: Արոտավայրում մնացող մարդիկ իրենց ժամանակը լցնում էին տարբեր խաղերով: Ամենատարածված խաղերն էին «չելիք», «ականջեականջ», «հինգ քար» և այլն: Ունեին նաև մի ուրիշ զվարճանքի ավանդույթ, այն կոչում էին «գուսգուրաջան»: Երիտասարդները հավաքվում էին, և ձեռքներին մի սկուտեղ՝ այցելում էին արոտավայրում եղած տները: Սա նրանց արևի աղոթքն էր: Դռները թակելով ասում էին՝

- Գուլջամ, գուլջամ, գուսգուրջամ, Ալլահից ի՞նչ ես ուզում:
- Արև:
- Կովերից ի՞նչ ես ուզում:
- Յուր:
- Հավերի՞ց:
- Չու:
- Մարդկանցի՞ց:
- Փայտ:

Եթե իրենց ոչինչ չէին տալիս, կրկնում էին «կույր մուկ ամին» աղոթքը, և առանց որևէ բան ստանալու՝ ոչ մեկի դռնից չէին հեռանում: Հավատում էին, որ ոչինչ չտվողի ճաշի կարթայի մեջ մուկ է ընկնելու: Մեկից յուր, մեկից պանիր, մեկից ձու և հաց էին հավաքում և դրանցով սեղան էին բացում, միասին ուտում: Այնուհետև յուրի կեսը լցնում էին կրակի վրա, որ կրակն էլ ավելի բորբոքվեր ու եղանակը մեղմանար<sup>19</sup>:

Ինչպես շարունակում է պատմել Չելիքթաշը, Քիզիրնոսում հետաքրքիր էր անցնում նաև աշունը: Գյուղացիներն, առաջին հերթին հավաքելով եգիպտացորենը, «սարան» կամ «շարոն», այսինքն՝ *շարան* էին պատրաստում, իրար վրա դարսում և թողնում մինչև չորանա, որից հետո զանրյուղներով տուն էին տանում: Սկսվում էր համատեղ աշխատանքը, գյուղացիները խմբվում էին և կեղևներից մաքրում էին եգիպտացորենը: Այս համատեղ աշխատանքը՝ *երաթլուրը (ըրգաթլուր)*, հարսանիքների նման ուրախ էր անցնում: Աղջիկներն ու տղաները երգում էին: Իսկ գործն ավարտելուց հետո կավալի (սրինգ) նվագի տակ ժամերով պարում էին<sup>20</sup>: Բոլոր պատրաստություններով մարդիկ գյուղում դիմավորում էին ձմեռը: Խստաշունն ձմեռային ծանր պայմաններում գյուղացիները տնից քիչ էին դուրս գալիս: Որոշ տներում կանայք ասեղնագործությամբ և զարդանախշությամբ էին զբաղվում<sup>21</sup>:

Ներկայացնենք նաև գրքույկում գրանցված Քիզիրնոսի շրջակա տեղանունները, ավելի ճիշտ ժողովրդական կամ միկրոտեղանունները՝ մեր բացատրություններով հանդերձ: Նշենք, որ դրանք կրում են տեղական խոսվածքների բնորոշ հնչյունական մակաշերտեր: Այսպես օրինակ՝ **Գարմութ (Garmut)**-*կաղնուտ* բառի բարբառային դրսևորումն է, **Գունդղ (Gumdeg)**-

Ուս-հայերեն ուս բառն է, **Ղուզ**-հավանաբար հայերենի *կուզ* բառն է: **Բերենքաշ**--կազմվել է *քերեն>գերան+քաշել, կտրել* բառերից, այսինքն՝ գերան կտրելու տեղ:

<sup>1</sup> Կա տեսակետ, որ *Արաքլը* անունը ծագել է հունական Հերակլես հերոսի անունից (Ö. Öztürk, Karadeniz Ansiklopedik Sözlük, Heyamola Yayinevi, İstanbul, 2005, I c., s. 88): Սակայն կարծում ենք, որ տեղական հիմքում Առաքել հայկական անունն է, որը աղավաղվելով՝ դարձել է *Արաքլը*: Դա է հաստատում նաև 15-րդ դարի իսպանացի ծանապարհորդ Ռուի Գոնսալես դե Կլավիխոյի մի հաղորդումը, ըստ որի՝ Սամարղանդ մեկնելու ծանապարհից նրա պատվիրակությունը մինչև Տրապիզոն հասնելը, անցել է Առաքելի երկրով: Առաքելն այդ հողերի տերն էր, ու Տթև նրա բնակիչները թիրստոյա հայեր էին, սակայն վատ մարդիկ էին և ավազակաբար: Նրանք մինչև հարկ չէին վերցնում, թույլ չէին տալիս, որ իրենց հողերով ցամաքատարներն անցնեն: Այստեղից նրանք անցնում են Այուրմենե, ապա՝ Տրեպիզոն (Տեւ Рун Гонсалес де Клавихо, Дневник Путешествия в Самарканд ко двору Тимура (1403-1406), "Наука", Москва, 1990, с. 160. Չի բացառվում, որ հենց այս Առաքելի անունից էլ մնացել է վերոնշյալ տեղանունը:

<sup>2</sup> Ö. Öztürk, Karadeniz Ansiklopedik Sözlük, Heyamola Yayinevi, İstanbul, 2005, II c., s. 680-681.

<sup>3</sup> Sakli Ezgiler Kizirnos, Derleme, Collection, Mecit Celiktas, Proje Yönetmeni: Birol Topaloglu, İstanbul, Temmuz, 2010, s. 5.

<sup>4</sup> Գ. Աճառյան, Հայերեն արձատական բառարան, հ. 1, ԵՊՀ հրատ., Երևան, 1971, էջ 548:

<sup>5</sup> Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1987, էջ 236:

<sup>6</sup> H. Aksu, Kizirnos: Arakli'da bir Hemsin köyü, "Bir Yasam", Sayı 12, Eylül-Ekim, Hopa, 2010, s. 59.

<sup>7</sup> H. Aksu, Kizirnos: s. 59.

<sup>8</sup> H. Aksu, Kizirnos: s. 60.

<sup>9</sup> Լ. Սահակյան, Օսմանյան կայսրության համայնախառնի բռնի մահմեդականացման քաղաքականության հետևանքները, Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, Ռ. Սաֆրասայանի ղեկավարությամբ խմբագրությամբ, Երևան, 2006, էջ 207-228:

<sup>10</sup> Sakli Ezgiler Kizirnos, Derleme, s. 7.

<sup>11</sup> Ա. Վարդանյան, *Կրոնափոխ համայնախառնի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ)*, ԵՊՀ հրատ., Երևան, 2009, էջ 273, 339:

<sup>12</sup> Sakli Ezgiler Kizirnos, Derleme, 2010, s. 7.

<sup>13</sup> U. Bläsing, *Armenisch-Türkisch Etimologische Betrachtungen ausgehend von Materialien aus dem Hemsingebiet*, pp. 124-125. Emiroglu, Kudret, Trabzon-Macka Etimoloji sözlük, Ankara, 1989, s. 33.

<sup>14</sup> I. Karaca, Hemsin, Tarih Dil Gelenek ve Görenekler, İstanbul, 2006, S. 76.

<sup>15</sup> Sakli Ezgiler Kizirnos, s. 8.

<sup>16</sup> Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, Երևան, 2001, էջ 293:

<sup>17</sup> I. Karaca, նշվ. աշխ., էջ 92:

<sup>18</sup> Ա. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 282:

<sup>19</sup> Sakli Ezgiler Kizirnos, s. 9.

<sup>20</sup> Sakli Ezgiler Kizirnos, s. 10:

<sup>21</sup> Նույն տեղում:

<sup>22</sup> Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, էջ 368:

<sup>23</sup> Ա. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 283:

Սկզբը՝ 2-3-րդ էջերում:

ԱՐԶ ՓԵՐՆՈՒՇԷ

Մեզ օր մե Դուրսուն վայրիչ գերմաղա գերթա: Սարին գերմաղե ժողվա գու, գաբա գու, շագլա գու, ջանվա քենգի: Քիչ մե քուբա, փուք քենա անա, արչե ջանվուն վարան բարգաձ ա: Շալագե վար քենա գու, խելօք յեք քարնա գու: Մանի-մանի հերու գերթա, փախչի գու: Մեն ալ քուբա անա, ալի արչե անդաղն ա: Արչե փախչի դէյի, մարթե բօլօքա գու, ցեն գենա: Թաքչելօվ քուբա ու փուք քենա, ալի արչե բարգաձ ա: Ջանվուն վարանինե քուբա, արչանե վարանիվա քար ցքա գու: Դերգաձ քարե քարթին քիբնի գու: Արչե հիվանդ ա, վիր էլլե չի: Դուրսունե ալ շալագե դանի չի, գերթա ու Մուսլա Ֆենիին ռաստ քուբա: Ֆենին արդին թաղի գու: Դուրսունե ձօլչուր աղաձ ա: Գասա թա:

- Ֆենի, այլե, արչ փերնեցի, այլե, փեյիք հալա: Ֆենին ալ գասա թա.  
- Դա, փախի քելխասա, արչե փերնվի՞ գու թա:  
- Դա, վալլա, այլե, չվան մե ար, այլե:

Ֆենին փուք գենա թա, մարթե շիրագ գասա: Չվանե գարնուն, գերթան անա, անդաղ արչե թեր բարգաձ ա: Չվանե ջիդե գանցենին, մեգե մեգ սենթին, մեգալե մեգալ սենթին, քուբան ջանվանինե:

Քուբան ու արչե ա Ֆենիի փագենե թենի գուն: Գերթան դանան հեղե ուղուչի ինչիգերթմե փեյի գուն, արչանե ուն գուդան: Արչե հիվանդ ա, ուղե չի: Քիչերե վար թեմի գուն, գերթան:

Հաքվան Ֆենի քուբա ու փուք քենա՝ արչե մերաձ ա: Փագենին դագնիվա փելուցքա Ֆենի արչանե անիվա յեք թողի գու: Նեքթենինե ալ Չօլին Շուքրին գովիյե հանդ դանի գու: Քիլօղ արչե գովուն ու Շուքրիի արանինե քիլելօվ վար գասնի: Շուքրի քելօխնիվե գորչա գու:

- Հալիվօ՛ր, արչե ինձի փերնեց, արչե ինձի փերնե՛ց, գասա ու փախչի գու:

Ֆենի ալ վերթյան ցեն գուդա.  
- Շուքրի եմիջա՛ւ, վախե՛լ մի, յե՛ս յեք թողի, վախե՛լ մի, յե՛ս յեք թողի...  
Այլ ու ծիծաղիլ մի:

**Ասացող՝ ՀԱՐՈՒՆ ԱՔՍՈՒ՝**  
ծնվ. 1970թ. Բաշորա (Մախկին Խիզի, Խիզորա) գյուղում:

Խոփալի գավառի տարբեր գյուղերում նույն բանն ասում են տարբեր կերպ: Որպեսզի ճիշտ պատկերացում կազմվի խոփալի խոսվածքի մասին, համեմատության համար ներկայացնում ենք նաև, թե ինչպես են որոշ բաներ ասում. ասենք՝ Գյունեչի (Չաղրիմա) գյուղում՝ շագլա գու - շալագ գու, քենգի - քենգնի, փերնվի գու - փերնեվի գու, վարան - վան, վարանինե - վանինե, արչանե- արչուն, արչին, փելուցք - փելուսք, վախե՛լ մի - վախե՛լ մի, ծիծաղիլ մի - ծիծաղե՛ մի, ուղե՛ մի - ուղե՛ մի: Գյուղերի մի մասում էլ ասում են՝ ջամփա - ջամփա, մանի - մոնի, հանդ - հոնդ, հիվանդ - հիվանդ, հերու - հեու և այլն:

ԱՐԶ ԲՈՆԵԼԸ

(Թարգմանություն)

Մի օր Դուրսուն վայրիչը բաղեղի է գնում: Սարուն բաղեղ է հավաքում, կապում, շալակում, ճանապարհ է



Հարուն Աքսուն Բաշորա գյուղում:

ընկնում: Մի քիչ գալիս է, նայում է՝ արջը ճանապարհի վրա պառկած է: Շալակի բեռը վայր է դնում, շտապ հետ դառնում: Արագ-արագ հետ է գնում, փախչում: Մեկ էլ որ գալիս է, էլի արջն այնտեղ է: Որ արջը փախչի, մարդը բղավում է, ձայն է հանում: Թաքնվելով գալիս է ու նայում, էլի արջը պառկած է: Ճանապարհի վրայով գալիս է, արջի վրա քար է նետում: Նետած քարը փորին է դիպչում: Արջը հիվանդ է, վեր չի ելնում: Դուրսունը էլ շալակի բեռը չի տանում, գնում ու Մուսլա Ֆենիին է հանդիպում: Ֆենին արտում աշխատում է: Դուրսունը ծով քրտինք է դարձել: Ասում է.

- Ֆենի, արի՛, արջ բռնեցի, ապա արի բերեմք: Ֆենին էլ ասում է թե.

- Դա\*, գլխից փախի, արջը կբռնվի՞:  
- Դա՛, Աստված վկա, արի, մի պարան վերցրու, արի: Ֆենին տեսնում է, որ մարդը ճիշտ է ասում: Պարանը վերցնում են, գնում են, այնտեղ դեռ արջը պառկած է: Պարանը վիզն են անցկացնում, մեկը մի կողմից, մյուսը մյուս կողմից, ճանապարհով գալիս են:  
Գալիս են ու արջն այս Ֆենիի փագենն՝ են դնում: Գնում են տնից ուտելու ինչ-որ բաներ են բերում, արջին են տալիս: Արջը հիվանդ է, չի ուտում: Գիշերը թողնում են, գնում:

Առավոտյան Ֆենին գալիս է ու տեսնում՝ արջը մեռած է: Փագենի տակի փվածքից Ֆենին արջին դուրս է գցում: Ներքևում էլ Չուլին Շուքրին կովերը հանդ է տանում: Գլորվող արջը կովերի ու Շուքրիի արանքով գլորվելով ներքև է անցնում: Շուքրին, ձայնը գլուխը գցած, գռռում է.  
- Հալիվո՛ր, արջն ինձ բռնե՛ց, արջն ինձ բռնե՛ց, - ասում է ու փախչում:  
Ֆենին էլ վերևից ձայն է տալիս.  
- Շուքրի հորեղբա՛յր, մի վախեցի՛ր, ես բաց թողեցի, ես բաց թողեցի...  
Արի ու մի ծիծաղիր:

\* Դա- դիմելաձև  
\*\*Փագեն-խոտ պահելու համար փայտաշեն փոքր շինություն, խոտանոց

ԽԱՂԵՐ

\*\*\*  
Արդալի քեղի մեջ  
Էնգալ ցած մերալե,  
Խիգօեցե դաղօցե  
Թեզ փերնա գու վերնե:



Շենսե Ենիգյուլ

մերալ-ամպ, մշուշ  
վերնե-թրքախոս  
\*\*\*

Մանին էլավ մանութին  
Էղեթյան դալ ունի,  
Իմ սելդան քալեց քուբա,  
Էղեթյան յար ունի:  
\*\*\*

Աշուն քուբա հասի գու  
Փեչի վայի թուխ յուխե,  
Դա՛, քեզի դեվին թա  
Ինձնա բեթարի թուխե:

Վերջին տողի տարբերակներն են՝  
Ինձնա բեթարի շաշե:  
Էմնեմու թուխ շաշե:  
յուխ-մոշ

**Ասացող՝ ՇԵՄՍԵ ԵՆԻԳՅՈՒԼ՝**  
ծնվ. 1942թ. Քենալիաշա (Մախկին Մաքրիյալ) ավանում, բնակվում է Բաշորա գյուղում:

\*\*\*  
Ալի քաունե էյել,  
Էր քալօղ չես թա,  
Քա՛, մալե բերե մեղավ,  
Քա՛, գաք գեթօղ չէ՞ս թա:

բեր-ոչխարների հավաքատեղի, ուր նրանց կթում են  
\*\*\*

Բիլբիլան օղնութ  
Խելեմօղ չես թա,  
Օնդեր, բաղ չեյիլե խեմօղ ու  
Խաղ ասօղ չէ՞ս թա:  
\*\*\*

Դա՛, մալիյեդ հեյ աա  
Գօբալախե փեյի գուն,  
Դա՛, թուն մի թա խեմդաս օջ  
Յես Խարխանին ժեմնի գուն:

գօբալախ-թաղիքից կարված յափնջի  
Խարխան-տեղանուն  
**Ասացող՝ ԷՐԳՅՈՒԼ ԱՔՉԻՉԵՔ՝**  
ծնվ. 1967թ. Քենալիաշա (Մախկին Մաքրիյալ) ավանում:

\*\*\*  
Իմ դաղին թեռունե  
Էրգու ֆիշաղ ցքեցին,  
Էրգու հաղիգ մեձ էշաղ  
Ինձի քեզի դեվին օջ:  
Ֆիշաղ-փամփուշտ

**Ասացող՝ ԱՍԻՅԵ ԱՅՐԸԼ՝**  
ծնվ. 1969թ. Խոփա (Հոփա) քաղաքում, բնակվում է Ստամբուլում:

\*\*\*  
Հավաս ալի մեռալեց  
Թաքիդում չախս եզօղ ա,  
Աստած ունին քու մօտ  
Քեզի ինձի դեվօղ ա:  
\*\*\*

Լուսնիկա էրանդ քիշեր,  
Հայրե էրթաք հաս քիշեր,  
Հաս քիշեր էլլի օջ անա,  
Էլլի թօղ հեթուց քիշեր:

\*\*\*  
Աստած ունին սելդալիս,  
Նանի, նանի, օյ, օյ,  
Հայրե նանի օյ, օյ, օյ,  
Էգօղ ինձի դօժօղ ա,  
Նանի, նանի, օյ, օյ,  
Հայրե նանի օյ, օյ, օյ,  
Քա՛, դօժան ու քալեցեդ,  
Նանի, նանի, օյ, օյ,  
Հայրե նանի օյ, օյ, օյ,  
Շալե մօլիյեցար թա,  
Նանի, նանի, օյ, օյ,  
Հայրե նանի օյ, օյ, օյ,  
Հաբա ինձի դօժօղ եդ,  
Նանի, նանի, օյ, օյ,  
Հայրե նանի օյ, օյ, օյ,  
Վաղե մօլիյեցար թա,

Նանի, նանի, օյ, օյ,  
Հայրե նանի օյ, օյ, օյ,  
Ինա էնթու փօսիյե,  
Նանի, նանի, օյ, օյ,  
Հայրե նանի օյ, օյ, օյ,  
Սարի ծաղիգ ծաղգաձ ա,  
Նանի, նանի, օյ, օյ,  
Հայրե նանի օյ, օյ, օյ,  
Աս դայի օՖ քաշելօվ,  
Նանի, նանի, օյ, օյ,  
Հայրե նանի օյ, օյ, օյ,  
Սերդիս աղուն քալվաձ ա,  
Նանի, նանի, օյ, օյ,  
Հայրե նանի օյ, օյ, օյ:  
**Ասացողներ՝**  
**ՄԵԼԻՅԵ ԱՔԲԸՅԸՔ,**  
**ՍՈՒԼԹԱՆ ԷՕՁՔԱՆ,**  
**ՇԱԶԻՅԵ ՋԱՆՋԸ և ուրիշներ:**



Հիբմեք Աբջիչեքն ավագ քրոջ՝ Գյուլեի հետ:

ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԳ

Հե, հե, հեթիյա,  
Հեթիյա, հե, բաբիլա\*,  
Չեյին քելխին քուղ մե քեդա,  
Քուղե դաի բաբուն դեվի,  
Բաբե ինձի խօղ էյեդ,  
Խօղե դաի գօվուն դեվի,  
Գօվե ինձի ախի էյեդ,  
Ախի դաի երգեվան ցքեցի,  
Էրգեվան ինձի լագուք էյեդ,  
Լագուքե դաի չաղացքե ցքեցի,  
Չաղացքե ինձի ալուր էյեդ,

Ալուրե դաի հարսին ցքեցի,  
Հարսին ինձի խեմուր էյեդ,  
Խեմուրե դաի քարե ցքեցի,  
Քարե ինձի հաց էյեդ,  
Հացե դաի չեյին քելխին  
Փայ փօսք այի:

\*բաբիլա - պապ բառի փաղաքշական ձևն է  
**Ասացող՝ ՀԻԲՄԵՔ ԱՔՉԻՉԵՔ՝** ծնվ. 1963թ. Քենալիաշա (Մախկին Մաքրիյալ) ավանում, բնակվում է Ստամբուլում:  
\*\*\*

(Թարգմանություն)  
Հե, հե, հեթիաք,  
Հեթիաք, հե, պապիլի,  
Աղբյուրի գլխին (մոտ) գդակ գտա,  
Գդակը տարա պապին տվեցի,  
Պապն ինձ խոտ տվեց,  
Խոտը տարա կովին տվեցի,  
Կովն ինձ գոմաղբ տվեց,  
Գոմաղբը տարա արտը գցեցի,  
Արտն ինձ եգիպտացորեն տվեց,  
Եգիպտացորենը տարա ջրաղացը գցեցի,  
Ջրաղացն ինձ ալուր տվեց,  
Ալուրը տարա տաշտը գցեցի,  
Տաշտն ինձ խմոր տվեց,  
Խմորը տարա քարին գցեցի,  
Քարն ինձ հաց տվեց,  
Հացը տարա աղբյուրի գլխին (մոտ)  
Բաժանեցի:

Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ: Լրատվական գործունեություն իրականացնող՝ «ՀԱՄՇԵՆ» հայրենակցական-քարեգործական հասարակական կազմակերպություն: Հասցեն՝ Երևան-37, Ազատության 2, բն. 8: Հեռախոս՝ (+374+10) 20 21 26: Գրանցման վկայական՝ N 03U054979, տրված՝ 26.06.2002թ.: Խմբագրությունը ոչ միշտ է համակարծիք հեղինակների տեսակետներին: Արտատպության կամ մեքերման դեպքում հղումը «Չայն համշենականին» պարտադիր է: Հրատարակվում է 2004թ. օգոստոսից:

“ДЗАЙН АМШЕНАКАН” (ГОЛОС АМШЕНСКИЙ). Ежемесячная газета Земляческой благотворительной общественной организации “АМШЕН” (г. Ереван), Гл. редактор - СЕРГЕЙ ВАРДАНЯН. Издаётся с августа 2004г. Газета распространяется бесплатно. Тел. 20 21 26. “HAMSHEN” Compatriotic-charitable public organization (Yerevan). “DZAYN HAMSHENAKAN”. Issued from August, 2004. Editor in chief SERGEY VARDANYAN. Tel. (+374+10) 20 21 26, E-mail: dzaynhamshenakan@yahoo.com, www.dzaynhamshenakan.org